ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	1. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՍԵՆՅԱԿ 1.1 Մոլբերտ - Պատրաստված է փայտյա նրբատախտակից: Նրբատախտակի հաստությունը 6 մմ է: Ամրացումները տրված են մեկը մյուսի մեջ մտնելով, փայտյա ատամիկների և չիվերի միջոցով, ավելի ամուր լինելու համար: Մակերեսը 65 սմ x 65 սմ: Ընդհանուր բարձրությունը 120 սմ է: Ոտքերի լայնությունը 4 սմ է, հաստությունը 2սմ: Ոտքերը ունեն միացնող հատված: Ոտքերը ռետինապատ են, անշարժ, կայուն դիրք ապահովելու համար: Վերևից ունի երկար ծխնի բացվելու համար: Առկա է փոքրիկ դարակ, նկարչական պարագաների համար, 3 սմ խորությամբ, 2-3 սմ բարձրությամբ, 65 սմ լայնությամբ: Քանակը լրակազմում՝ 5 հատ: 1.2 Տումբա 30x30x40 - Պատրաստված է փայտյա նրբատախտակից: Նրբատախտակի հաստությունը 6 մմ է: Բարձրությունը 40 սմ է: Մակերեսը 30 սմx 30 սմ: Առկա է 3 անցք 20 մմ շառավիղով: Ունի ներքին փայտյա կմախք, առնվազն 3 սմ լայնությամբ փայտյա ռեյկաներից պատրաստված: Ամրացումները տրված են պտուտակներով և էմուլսիայով: Արտաքին մակերեսները հարթեցված են և կրկնակի լաքապատված են բարձրակարգ փայլատ լաքով: Քանակը լրակազմում՝ 10 հատ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ВАНДЕКОР ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	